



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 18/20**

18.12.2020թ.

ք. Երևան

«Կոնվերս Բանկ» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ Դիմող) դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան «Մնանկության մասին» օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկում է «Մնանկության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 43-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերի (17.06.2016 թվականի ՀՕ-105-Ն օրենքի փոփոխություններով գործող խմբագրությամբ) համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածին, 60-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին այնքանով, որքանով դատական պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ չեն ապահովում այդ իրավունքն արդեն իսկ իրացրած ապահովված պարտատիրոջ սեփականության և արդար դատաքննության իրավունքի պաշտպանությունը:

Քննարկվող նորմերը դիտարկելով Օրենքի այլ նորմերի հետ համակարգային ամբողջականության ապահովման տեսանկյունից՝ Դիմողը գտնում է, որ վիճարկվող իրավանորմերի առնչությամբ ձևավորված իրավակիրառ պրակտիկան այնքանով, որքանով դատական պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ չի ապահովվում ապահովված պարտատիրոջ իրավունքների իրացումը, հակասում է ՀՀ Սահմանադրությանը:

Դիմողը՝ որպես ապահովված պարտատեր, 27.08.2019 թվականին դիմում է ներկայացրել ՀՀ սնանկության դատարան ապահովված իրավունքի առարկան պահանջի մասի չափով որպես սեփականություն ստանալու վերաբերյալ: 06.09.2019 թվականի որոշմամբ Դիմողի դիմումը բավարարվել է: Որոշումն օրենքով սահմանված ժամկետում բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան և վերաքննիչ

դատարանի 07.10.2019 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է: Ըստ Դիմողի՝ առնվազն 07.10.2019 թվականից վերջինս անշարժ գույքի նկատմամբ ստացել է սեփականության իրավունք կամ առնվազն նյութական միջոցը ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիք, որպիսի իրավունքը պաշտպանված է ՀՀ Սահմանադրությամբ:

Ավելին՝ ՀՀ սնանկության դատարանի 06.09.2019 թվականի որոշումը հրապարակման պահից մտել է օրինական ուժի մեջ և շահագրգիռ անձի կողմից օրենքով սահմանված ժամկետում վերաքննության կարգով որոշումը վիճարկելու իրավունքն իրացվել է, այսինքն՝ 06.09.2019 թվականի դատական ակտով Դիմողի համար կայացվել է որոշակի հաստատուն որոշում՝ կապված իր իրավունքների և պարտականությունների հետ, սակայն երրորդ անձի գույքով պահանջի ապահովումը դադարեցնելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու ՀՀ սնանկության դատարանի 12.09.2019 թվականի որոշման վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը 14.10.2019 թվականի որոշմամբ ըստ էության կասկածի տակ է դրել օրինական ուժի մեջ մտած 06.09.2019 թվականի որոշումը, որի արդյունքում առկա են ՀՀ սնանկության դատարանի 06.09.2019 թվականի իրավունք սահմանող որոշումը և Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.10.2019 թվականի իրավադադարեցնող որոշումը, որոնց կողմից առաջացվող իրավական շփոթը բացառում է փոխադարձ գոյությունը:

Այսպիսով, վերոգրյալ իրավական վերլուծությունները համադրելով թիվ ՍԴ2/0034/04/16 սնանկության գործի փաստերի հետ, Դիմողը գտնում է, որ տվյալ դեպքում 06.09.2019 թվականի որոշման օրինական ուժի մեջ մտած լինելու և օրենքով սահմանված կարգով բեկանված կամ փոփոխված չլինելու պայմաններում Օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերի վերաբերյալ դատական պրակտիկայում տրված մեկնաբանությունները չեն կարող համարվել իրավաչափ և հակասում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերին, 61-րդ հոդվածի 1-ին մասին և 63-րդ հոդվածի 1-ին մասին:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողը վիճարկում է «Սնանկության մասին» օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերի (17.06.2016 թվականի ՀՕ-105-Ն օրենքի փոփոխություններով գործող խմբագրությամբ) համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածին,

60-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին այնքանով, որքանով դատական պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ չեն ապահովում այդ իրավունքն արդեն իսկ իրացրած ապահովված պարտատիրոջ սեփականության և արդար դատաքննության իրավունքի պաշտպանությունը:

Օրենքի վիճարկվող դրույթների՝ 43-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերի բովանդակությունը հետևյալն է.

9. Եթե ապահովված իրավունքի առարկայի մեկնարկային գինը հավասար է ապահովված պարտատիրոջ պահանջի գումարին կամ ցածր է դրանից, ապա պարտատերերի ցանկում ընդգրկված պարտատերն իրավունք ունի իր պահանջի կամ դրա մասի չափով դատարանի որոշմամբ որպես սեփականություն իր կամ իր նշած անձի օգտին ստանալու գրավի առարկան՝ փոխհատուցելով այդ գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը, ինչպես նաև կառավարչի վարձատրությունը՝ գրավի առարկայի արժեքի հինգ տոկոսի չափով: Այդ դեպքում տվյալ պարտատիրոջ պահանջի չափը չի նվազեցվում գույքի պահպանման և փոխանցման ծախսերի և կառավարչի վարձատրության համար վճարված գումարի չափով:

10. Եթե պարտատերերի ցանկում ընդգրկված ապահովված պարտատիրոջ պահանջն ապահովված է երրորդ անձի գույքով, ապա այդ անձն իրավունք ունի դադարեցնելու իր գույքով պահանջի ապահովումը՝ սնանկության հատուկ հաշվին որպես դեպոզիտ փոխանցելով՝

1) գույքի առաջիկա իրացման համար գնահատված կամ մեկնարկային գինը հիմնական ապահովված պարտավորության արժեքի չափը գերազանցելու դեպքում՝ ապահովված պահանջի, գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը.

2) գույքի առաջիկա իրացման համար գնահատված կամ մեկնարկային գինը հիմնական ապահովված պարտավորության արժեքի չափից պակաս լինելու դեպքում՝ վերջին չկայացած աճուրդի մեկնարկային գնի չափով:

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ *Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:*

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

4. Ոչ ոք չի կարող գրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Այսպես, Դիմողը վիճարկում է նախքան «Մասնկության մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 12.12.2019 թվականի ՀՕ-294-Ն օրենքի ընդունումը գործող խմբագրությամբ Օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերի սահմանադրականությունը՝ գրավառուի սեփականության իրավունքի (ակնկալիքի) և արդյունավետ դատական պաշտպանության ու արդար դատաքննության իրավունքի, ինչպես նաև իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից:

Սահմանադրության 61-րդ հոդվածի և 63-րդ հոդվածի սահմանադրաիրավական նորմերը համանման բովանդակությամբ սահմանված էին մինչև 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներում, որոնց վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանն իր դիրքորոշումն է արտահայտել 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներում: Նշված որոշումներով բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19, 42, 43 և այլ հոդվածներով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով, վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, կարևորել է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ

իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ հատկապես միջազգային այն պարտավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջև: Դատական պաշտպանության իրավունքն իր ամրագրումն է գտել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. Եվրոպական կոնվենցիայում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական նախադեպերում: Այս իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի երաշխավորմանը և պետության կողմից այդ իրավունքի իրացման համար արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությանը: Անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության 18-րդ հոդվածի նպատակը իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ, և արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է: Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում:

ՀՀ Սահմանադրական դատարանը 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշման մեջ նշել է «6. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ հայքը կամ դիմումը դատարան՝ իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ

իրավական պետություններում, ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ (ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մաս): Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից: Ակնհայտ է, որ առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատարաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով: Բացի դրանից, դատական իշխանությունն է, որ անկախ է բոլոր այլ մարմիններից և պարտավոր է վերահսկել իշխանության մյուս ճյուղերին պատկանող բոլոր մարմինների կողմից իրավաչափ գործելու իրենց պարտականության կատարումը, վերացնելով այդ մարմինների այն իրավական ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնք խախտում են անձանց սուբյեկտիվ իրավունքները կամ, այլ կերպ՝ ոտնձգում են Սահմանադրությամբ երաշխավորված իրավակարգի դեմ»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առանձնահատուկ կարևորել է, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

Այսինքն՝ անձը, դիմելով դատարան, պետք է լիարժեք դատական պաշտպանության իրավունք ունենա, ապահովված լինի արդար դատաքննություն իրականացնելու պետության պարտավորությամբ, իր իրավունքների լիարժեք պաշտպանության լեզիտիմ ակնկալիքով:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է իրավական որոշակիության և համաչափության սկզբունքներին և արտահայտել հետևյալ դիրքորոշումը.

2019 թվականի ապրիլի 2-ի ՄԴՈ-1452 որոշում. «Իրավական որոշակիության սկզբունքն ընկած է Սահմանադրության անփոփոխելի 1-ին հոդվածի հիմքում, որով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, **իրավական պետություն է:**

Իրավական պետությունը ենթադրում է իրավական օրենքի առկայություն, որը պետք է լինի հնարավորինս հստակ ու որոշակի և հնարավորություն տա դրա հասցեատերերին ձևավորելու և դրսևորելու համապատասխան վարքագիծ: Վերոնշյալ դիրքորոշումը հաստատվում է Սահմանադրական դատարանի 08.04.2008թ. ՄԴՈ-753 որոշմամբ, որում, մասնավորապես, նշվում է. «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլնի, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը»:

Դիմողի պնդմամբ թիվ ՄԴ2/0034/04/16 սնանկության գործի շրջանակներում վիճարկվող դրույթներին տրվել են հակասող մեկնաբանություններ՝ արդյունքում խախտելով իր՝ սահմանադրորեն երաշխավորված իրավունքները:

Թիվ ՄԴ2/0034/04/16 սնանկության գործի փաստական հանգամանքները և կայացված դատական ակտերը հետևյալն են:

Այսպես, թիվ ՄԴ2/0034/04/16 սնանկության գործի շրջանակներում Դիմողը՝ գրավառու բանկը, 27.08.2019 թվականին դիմում է ներկայացրել ՀՀ սնանկության դատարան՝ գրավի առարկա գույքը պահանջի մասի չափով որպես սեփականություն ստանալու վերաբերյալ: 06.09.2019 թվականի որոշմամբ դիմումը բավարարվել է: Նշված որոշման դեմ վերաքննիչ բողոք է ներկայացվել, որի վարույթ ընդունելը 07.10.2019 թվականին մերժվել է:

Միաժամանակ, երրորդ անձ գրավատուի կողմից 09.09.2019 թվականին միջնորդություն է ներկայացվել ՀՀ սնանկության դատարան՝ երրորդ անձի գույքով պահանջի ապահովումը դադարեցնելու վերաբերյալ, որը ՀՀ սնանկության դատարանի

12.09.2019 թվականի որոշմամբ մերժվել է այն հիմնավորմամբ, որ 06.09.2019 թվականի որոշմամբ արդեն իսկ թույլատրվել է պարտատիրոջը ի սեփականություն ստանալ գրավի առարկան: Նշված որոշման դեմ 16.09.2019 թվականին վերաքննիչ բողոք է ներկայացրել երրորդ անձ գրավատուն: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը, մեկնաբանելով Օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերը, 14.10.2019 թվականի որոշմամբ եզրահանգել է, որ Օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի կիրառման արդյունքում կայացվելիք դատական ակտը ենթադրում է հանձնման վերաբերյալ պայմանագրի կնքում, իսկ նշված պայմանագիրը կնքված կարող է համարվել բացառապես իրավունքի պետական գրանցում ստացված լինելու պայմաններում: Նշված համատեքստում իրավունքի փոխանցման գործարքի բացակայությունը հիմք է իրավատեր սուբյեկտի համար սեփականության իրավունքը պաշտպանելուն ուղղված Օրենքի 43-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված գործընթացի նախաձեռնման համար:

Օրենսդիրը գրավով ապահովված պարտատիրոջ համար սահմանել է իր գրավի առարկան պահանջի համապատասխան մասի դիմաց ի սեփականություն ընդունելու իրավունք, ինչպես նաև համապատասխան ընթացակարգ: Օրենսդիրը միաժամանակ սահմանել է նաև պարտապան չհանդիսացող գրավատուի սեփականության իրավունքի պաշտպանության հնարավորություն, սահմանել է երրորդ անձ գրավատուի գույքով պահանջատիրոջ պահանջի ապահովումը դադարեցնելու այդ գրավատուի իրավունքը և այդ իրավունքի իրացման պայմանները:

Օրենքի 43-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ կետի բովանդակությունից հետևում է, որ դրա կիրառման համար օրենսդրի սահմանած պայմաններն են՝ տվյալ գույքի գրավատու, սեփականատեր պետք է լինի սնանկության գործով պարտապան չհանդիսացող երրորդ անձը, պետք է լինի չկայացած աճուրդ, գույքի առաջիկա իրացման համար գնահատված կամ մեկնարկային գինը հիմնական ապահովված պարտավորության արժեքի չափից պետք է պակաս լինի, երրորդ անձ գրավատուն պետք է սնանկության հատուկ հաշվին փոխանցի վերջին չկայացած աճուրդի մեկնարկային գնի չափով գումար:

14.10.2019 թվականին ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից որոշման կայացման պահին գրավադրված անշարժ գույքը հանդիսացել է պարտապան չհանդիսացող երրորդ անձի սեփականությունը, այն գրավադրված է եղել

պարտապանի պարտավորությունների ապահովման համար, 14.08.2019թ. աճուրդը հայտարարվել է չկայացած, անշարժ գույքի աճուրդի մեկնարկային գինն անհամեմատ պակաս է եղել բանկի ապահովված պարտավորության չափից, երրորդ անձ գրավատուն սնանկության հատուկ հաշվին վճարել է վերջին չկայացած աճուրդի մեկնարկային գնի չափով գումար՝ 48.993.545 ՀՀ դրամ: Այսինքն՝ սույն դեպքում կիրառելի է եղել Օրենքի 43-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ կետով սահմանված գրավի առարկա գույքով պահանջի ապահովումը դադարեցնելու հիմքը, ինչի հիման վրա էլ կայացվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը:

Այն հանգամանքը, որ երրորդ անձ գրավատուի կողմից միջնորդության ներկայացման պահին՝ 09.09.2019թ., արդեն առկա էր ՀՀ սնանկության դատարանի որոշումը գրավի առարկա հանդիսացող գույքը պահանջի դիմաց պահանջատիրոջը որպես սեփականություն հանձնելու թույլտվության մասին, որով գրավի առարկան 48.993.545 ՀՀ դրամ պահանջի դիմաց որպես սեփականություն հանձնվել է պարտատեր «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ին, ուստի երրորդ անձ գրավատուն չէր կարող օգտվել Օրենքի 43-րդ հոդվածի 10-րդ մասում նշված իրավունքից, հիմնագուրկ է գուտ միայն այն հիմնավորմամբ, որ Օրենքով սահմանված նշված իրավունքից երրորդ անձ գրավատուն կարող է օգտվել, քանի դեռ հանդիսանում է տվյալ գույքի սեփականատեր, քանզի այդ իրավունքը պատկանում է գույքի սեփականատիրոջը՝ գրավատուին:

Անդրադառնալով Դիմողի այն պնդմանը, թե ՀՀ սնանկության դատարանի 06.09.2019 թվականի որոշմամբ գույքն արդեն ի սեփականություն հանձնվել էր իրեն, ապա նշենք, որ որոշմամբ անշարժ գույքը պարտատիրոջը հանձնելու թույլտվություն տալը դեռևս չի նշանակում գույքը պարտատիրոջը հանձնել: Որոշումն ընդամենը սնանկության գործով կառավարչին իրավունք է տալիս օրենսդրությամբ սահմանված կարգով, նոտարական վավերացմամբ գործարք կնքել գույքն ի սեփականություն հանձնելու վերաբերյալ: Իսկ այդպիսի գործարք սնանկության վարույթի շրջանակներում կնքված չի եղել: Անկախ անշարժ գույքը պարտատիրոջը ի սեփականություն հանձնելը թույլատրելու մասին ՀՀ սնանկության դատարանի որոշման առկայությունից, անշարժ գույքի նկատմամբ գրավառուի սեփականության իրավունքը կարող է ծագել միայն այդ իրավունքի պետական գրանցման պահից, ինչը տվյալ դեպքում տեղի չի ունեցել, ավելին, գրավադրված գույքը հանդիսացել է երրորդ

անձ գրավատուի սեփականությունը, դադարած չի եղել նաև գրավի իրավունքը, քանզի գրավի իրավունքի դադարման պետական գրանցում նույնպես չի կատարվել:

Հարկ է նշել, որ վերը նշված տրամաբանության մասին է վկայում նաև Օրենքի համակարգային վերլուծությունը:

Մասնավորապես, Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն՝ «բ) արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի գույքի, ինչպես նաև նրա մասնակցի (մասնակիցների) սեփականությունը հանդիսացող պարտապան կազմակերպությունում ունեցած բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայաբաժինների և օրենքներով սահմանված այլ արժեթղթերի) օտարումը, վարձակալության տալը, գրավադրումը կամ այլ ձևով ծանրաբեռնումը...»:

Նույն հոդվածի 3-րդ մասի գ) կետի համաձայն՝

«3. Մորատորիումի գործողությունը չի տարածվում՝

գ) ապահովված իրավունք ունեցող պարտատիրոջ ապահովված իրավունքի առարկայի վրա, եթե դատարանը սույն օրենքով սահմանված կարգով պարտատիրոջը թույլատրել է դրա իրացումը արտադատական կարգով.»:

Օրենքի 39.1 հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Այն պարտատերը, որը պարտապանի նկատմամբ ունի ապահովված իրավունքներ, և նրանց միջև օրենքով սահմանված կարգով կնքված պայմանագրով առկա են այդ իրավունքների արտադատական իրականացման պայմաններ, կարող է ... դիմում ներկայացնել դատարան՝ պահանջի չափը հաստատելու և ապահովված իրավունքների առարկայի արտադատական կամ սույն օրենքով նախատեսված կարգով իրացում թույլատրելու խնդրանքով.»:

Օրենքի 39.2 հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

«1. Դատարանը, ստանալով ապահովված պարտատիրոջ դիմումը, դիմումի օրինակը երկու աշխատանքային օրվա ընթացքում հանձնում է պարտապանին և կառավարչին: Պարտապանը և կառավարիչը պարտավոր են դիմումի օրինակը ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, դիմումի կապակցությամբ գրավոր դիրքորոշում հայտնել:

2. Եթե պարտապանը կամ կառավարիչը սահմանված ժամկետում դիրքորոշում չեն ներկայացնում կամ ներկայացված դիրքորոշմամբ չեն առարկում դիմումին, ապա դատարանը ... կայացնում է որոշում ապահովված պարտատիրոջ պահանջի չափը

հաստատելու և ապահովված իրավունքների առարկայի իրացում թույլատրելու մասին»:

Հարկ է նկատել, որ 12.12.19 թվականի ՀՕ-294-Ն օրենքով «Մնանկության մասին» օրենքը լրացվել է 39.3 հոդվածով, որը վերտառված է «Ապահովված իրավունքի առարկայի իրացումը»:

Նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Ապահովված պարտատերը կարող է արտադատական կարգով իրացնել ապահովված իրավունքի առարկան, եթե առկա է ապահովված պարտատիրոջ պահանջի չափը հաստատելու և ապահովված իրավունքի առարկայի իրացումը թույլատրելու մասին դատարանի որոշումը:

2. Ապահովված իրավունքի առարկան արտադատական կարգով իրացնելու իրավունք ունեցող ապահովված պարտատերը երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկան իրացնում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով...»:

Այսպիսով՝ ակնհայտ է, որ ինչպես սույն վեճի քննության ժամանակ, այնպես էլ դրանից հետո գործող օրենքում «ապահովված իրավունքի առարկայի իրացում» ասելով՝ օրենսդիրը նկատի է ունեցել քաղաքացիական օրենսգրքի նորմերի համապատասխան գույքի արտադատական իրացումը:

Ընդ որում, սույն գործով վիճարկվող «Մնանկության մասին» օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված պարտատիրոջ իրավունքը *«որպես սեփականություն իր կամ իր նշած անձի օգտին ստանալու»* ապահովված իրավունքի առարկան կարող է իրականացվել բացառապես ապահովված իրավունքի արտադատական կարգով իրացման վերաբերյալ Օրենքի վերը նշված տրամաբանության համաձայն, այն է՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված նորմերին համապատասխան: Այսինքն՝ պարտատերն իրավունք ունի որպես սեփականություն ստանալ ապահովված իրավունքի առարկան քաղաքացիաիրավական գործարք կնքելով, որի կնքման առաջնային նախապայմանը այդպիսին կնքելու մասին դատարանի թույլտվությունն է՝ վիճարկվող դրույթին համապատասխան:

Նման պայմաններում, Օրենքի 43-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված երրորդ անձ գրավատուի իրավունքը չի կարող սահմանափակվել գույքը պարտատիրոջը

հանձնելու թույլտվության մասին ՀՀ սնանկության դատարանի 06.09.2019թ. որոշմամբ, քանի որ միայն նման որոշումը բավարար չէ գրավադրված գույքը գրավառուին ի սեփականություն անցնելու համար, այլ ենթադրում է իրավական այլ գործողություններ (պայմանագրի կնքում, պետական գրանցում և այլն):

Ավելին, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.10.2019 թվականի որոշումը անձի՝ սահմանադրորեն երաշխավորված սեփականության իրավունքի պաշտպանության և պահպանության վառ և հիմնավոր օրինակ է:

Այս պարագայում նույնիսկ իմաստագուրկ է խոսել Դիմողի սեփականության իրավունքի պաշտպանությունից, քանի որ գրավը հանդիսանում է պատավորության կատարման ապահովման միջոց, և գրավառու հանդիսացող բանկը պետք է շահագրգռված չլինի, թե ինչ միջոցով կատարվեց պարտավորությունը՝ դրամական բավարարմամբ, թե՞ գրավադրված գույքի հաշին: Վերջինիս պետք է հետաքրքրի միայն պարտավորության ըստ էության կատարման փաստը: Գույքի գրավը նշված հիմքով դադարելու արդյունքում չի խախտվում բանկի՝ որպես գրավով ապահովված պարտատիրոջ իրավունքը: Օրենսդիրը սահմանելով չկայացած աճուրդի մեկնարկային գնով գույքն ի սեփականություն ստանալու գրավառուի իրավունքը, սահմանել է նաև սեփականատեր-գրավատուի իրավունքը նույն գումարի վճարմամբ դադարեցնել գրավը պահպանելով սեփականատիրոջ իրավունքը, միաժամանակ, գրավառուի համար հնարավորություն ստեղծելով ստանալ այն գումարը, որի չափով պետք է պակասեր պարտքը գույքը գրավառուին հանձնելու դեպքում:

Ինչպես իրավացիորեն նկատել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 14.10.2019 թվականի որոշման մեջ՝ բանկին հետաքրքիր է գումարի վերադարձը, ինչն ապահովվում է, բանկը ռիելթորական կազմակերպություն չէ, որպեսզի նրան հետաքրքիր լինի բնակարանի ձեռքբերումը՝ հետագայում վերավաճառելու նպատակով:

Գրավառուն որոշակի գումարի դիմաց ցանկություն է հայտնել գրավադրված գույքն ի սեփականություն ընդունելու, դրան հակառակ երրորդ անձ գրավատուն վճարել է այն գումարը, որի դիմաց գրավառուն ցանկություն է հայտնել ի սեփականություն ընդունել գրավադրված գույքը, այսինքն՝ գրավառուի հանդեպ պարտավորությունը տվյալ գումարի չափով փաստացի կատարված է: Իսկ թե ինչու գրավառուն պարտավորության համար վճարված գումարի դիմաց նախընտրում է

գրավի առարկա հանդիսացող անշարժ գույքը ձեռք բերել, դա արդեն սույն գործի քննարկման շրջանակներից դուրս է:

Վերոգրյալից ելնելով՝ գտնում ենք, որ մի կողմից՝ Դիմողի սեփականության և արդար դատաքննության իրավունքների խախտում տեղի չի ունեցել, բանկը ստացել է իր հանդեպ պարտավորության դրամական բավարարում, իսկ մյուս կողմից՝ պաշտպանվել և պահպանվել է երրորդ անձ գրավատու հանդիսացող անձի՝ սահմանադրորեն երաշխավորված սեփականության իրավունքը, ինչի շնորհիվ անձն անհարկի չի գրկվել իր սեփականության իրավունքից:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- «Սնանկության մասին» օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերը (17.06.2016 թվականի ՀՕ-105-Ն օրենքի փոփոխություններով գործող խմբագրությամբ)՝ դատական պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ, ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց չեն:

 Recoverable Signature

Համակարգող՝

X Lyudvik Davtyan

Լյուդվիկ Դավթյան

Signed by: DAVTYAN LYUDVIK 1407840169